

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:
Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւններ ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւններին համար վճարում են
խրաքանչիւր լատին 2 կոպէկ:

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ

ՆԵՐԿԱՑ 1887 ԹԻՖԼԻՍ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն օրը և նոյն պրոգրամայով: Մեր աստիճանները տեղական
ՀԵՌԱԳՐԱԿԱՆ: Տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարեկանը 6 ռուբլ:
Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՐԱԿԱՆԱԿԱՆ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների մի-
կիւնում, Թամարիայի տանը):
Կայսերական ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հաս-
ցեով: ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Բաղրից. Նա-
մակ Թէլաւից. Ներքին Լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ, Բոլորական ազգային ժողովը. Նամակ
Թիւրքիայից. Արտաքին Լուրեր. — ԽԱՌԻ ԼՈՒՐԵՐ.
— ՀԵՌԱԳՐԱԿԱՆ. — ԲՈՐՈՒՄ. — ՏԱՍՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ.
ՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մի դաստիարակչական
ուղղութիւն.

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒՑ

Գունիսի 20-ին

Խաղաղութիւնը նորերում քաղաքից դուրս
գտնում է մի սպանած մարդու դիակ. նա փողո-
ցային խաղաղի նուազածու էր, որին, ինչպէս
յայտնվեցաւ, սպանել են երկու հայ, և երկու
թուրք: Չարմանալին այն է, որ վերջիններից մե-
կը կոյր է, բայց նա է եղել զինուորի պատճառը
այդ սպանութեան: Օրերումս նահանգական դա-
տարանը վճռեց սորանց բոլորին ուղարկել տա-
ժանակիր աշխատանքի, ուրեմն և ցմա՛ք քաղաքի
ժանակիր աշխատանքի, ուրեմն և ցմա՛ք քաղաքի
բացի մէկ հայից, որը արդէն բանտում մեռել է:
Այս քանի օրերս մի ուսու փաճառական դիմում
է մի մրգավաճառ թուրքից բան գնելու, վերջինը
նկատում է նորա գրպանում վողի մեծ քանա-
կութիւն, որը խելու մտքով յարձակվում է նորա
վրա, վիրաւորում և թողնում կամենում է խեղդել:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒՂԱԿՈՒԹԻՒՆ

ՄԻ ԴԱՍՏԱՐԱԿԱՆ ՈՒՂԱԿՈՒԹԻՒՆ

I.

Մեր հասարակական խնդիրների մէջ դաստիա-
րակութեան խնդիրը ամենից ծանրակշիւ և հար-
կաւորադոյնն է: Բայց չը նայելով խնդրի այս ա-
տիճան կարեւորութեանը, մոզանում դեռ ևս նա
կանոնաւոր կերպով չէ մշակված և բացատրված.
մեր ծնողները, դաստիարակները, ուսուցիչները
դեռ որոշ կերպով չեն հասկացել, թէ ինչ է նը-
րանց զինուոր և էական պարտականութիւնը: Մեր
մէջ աւելի տարածված են, աւելի ընդունված են
գործարարի են մանկավարժութեան արտաքին
մանկավարժութեանը, նրա մասնագիտական
այս կամ այն միակողմանի և իսկապէս անօգուտ
կանոնները, քան թէ բուն դաստիարակչական
մտքերը, մարդու բնութեան մասին լայն և ճշմա-
րիտ հասկացողութիւնները: Մեր ուսումնարանի
ուսուցիչը աւելի շատ աշխատում է բան սովոր-
եցնել, աշակերտին, քան թէ կրթել, դաստիարա-
կել նրանց:

Սրա զինուոր պատճառը նրանումն է, որ մեր
գրականութիւնը չափազանց քիչ է պարագրում

բայց այդ բոլորը, ինչպէս պատմում են, անա-
լոզ է անցնում. թուրքը իր գոհին թողնում է,
երեւի մեռած կարծելով, կրպակը կողպում ու
փակելու: Բայց քիչ ժամանակից յետոյ, երբ
կառքով մօտենում է դիտելու համար թէ ինչ է
կատարվում իր կրպակի շուրջը, իսկայն ձերբա-
կալվում է:

Քանի մի ժամանակ սրանից առաջ մի մարդա-
տեցի (Շամախու դաւաւ) պատանի, դաշոյնով վի-
րաւորում է իր համադիւղացի մի կնոջ: Դատա-
րանը դատաւարարում է նրան ցմա՛ք քաղաքի:

Այս օրերս Բաղրի երկաթուղու կայարանում
պատահել է հետեւեալ եղանակաւորութիւնը: Ինչ
որ մի լեզգիին, իր անկարգութեան պատճառով
կառավարը նկատողութիւն է անում: Կատարած
խռնեցին դաշոյնի հարուածով ծանր վէրք է տա-
լիս կառավարին, ապա յարձակվում է մի ժան-
դարի վրա և վիրաւորում է նորան, յետոյ վա-
ղում է կատաղաբար և անխտիր ամեն պատահո-
ղի վրա: Մինչև նորան բռնեցին, նա արդէն վի-
րաւորած է լինում, ինչպէս հաւատացնում են,
մօտ տասն և ութ մարդ (ոմանք 25 են ասում),
վերջապէս հանդիպում է նորան մի այլ ժան-
դար, մկալում է մենամարտը, լերդիլ դաշոյնի
հարուածից ժանդարմի թուրը երկու կտոր է
լինում, բայց և այնպէս ժանդարմը կէս թրով
կարողանում է վիրաւորել նորա ոտները, յետոյ
պարանոցը: Անցքը պատահեց ժամը մէկին. երե-
կոյան արդէն լեզգին անչնչացած էր: Վիրաւոր-
ված են, ինչպէս ակնատեսները հաւատացնում

դաստիարակութեան խնդրով: Մեր բոլոր ման-
կավարժական հրատարակութիւնները ունեցել են
մի տեսակ անհասկանալի, չոր բնատրուիւն:
Նրանք աւելի վրադիւն են բուն մասնագիտական
խնդիրներով, մանկավարժական մեթոդների լա-
ցատրութեանով, քան թէ դաստիարակչական գլխա-
ւոր և ամենատարրական մտքեր պարզելով: Գրա-
կանութեան ամենամեծ կոշտը նրանումն է, որ
նա հասկանալի և պարզ եղանակով տարածել է մի
ժողովրդի մեծամասնութեան մէջ դիտութեան
տուած անհրաժեշտ, պարկեղեկական հետեւեցնե-
լով: Այն ժամանակ միայն գրականութիւնը ծա-
ռայած էր լինել իր բուն նպատակին, երբ նա
ամեն բանում ժողովրդի մեծամասնութեան շահե-
քը դերադատում և նախապատիւ է համարում:
Մանկավարժական գրականութիւնը, թէ մեր և թէ
ուրիշ ազգերի մէջ, ոչ թէ նրա համար է, որ մի
քանի գիտնական մասնագէտներ վերացական թե-
օրիւնների մասին ձուռնու ու վիճաբանեն, այլ
նրա զինուոր նպատակն է հասկանալի դարձնել
ժողովրդի մեծամասնութեան համար մանկավա-
րժական գլխաւոր սկզբունքները: Ով որ ուզում
է ճշմարիտ օգուտ ընդել հասարակութեանը, նա
կրպիւք չը պէտք է շինեց սորաքին ձևերով: Հա-
սարակութեան օգուտը պահանջում է ոչ թէ վի-
րացական, խորամուկ և անհասկանալի դատողու-
թիւններ, այլ կենդանի և իրական մտքեր,
գործնական, դիւրամբօճեղի օրինակներ: Ի՞նչ այս
միջոցով կարելի է ժողովրդի մեծամասնութեան

են մի կատարել, 3 ժանդարմ, և 14 մասնաւոր
անձինք՝ ուսու, հայ և թուրք:

Պէտք է անկասկած, որ մեզանում սպանութիւն-
ներին թիւ չը կայ, անցեալ օրն էլ մի թուրք
սպանեց իր մօրաբարձը: Դժուր է ըզրացողներից
էլ մինչև այժմ խեղդել են երեք հոգի:

Ինչպէս և գրված էր «Մշակում», այ. Դահգե-
դանեանի գործարանին պատկերած «Կատարեան
ընկերութեան» կառավարմանը (վաղոն սիւս-
տերն) արդէն վերջանալու վրա են: Պատկերած
50 հատից տասը արդէն ընդունված են երկա-
թուղային վարչութիւնից, որոնք անուպատելի յա-
ջողութեամբ տարվելով Բաթում, ամսիս 16-ին
դարձնում են այնտեղից. նրանցից միայն երկուսի
խաղաղները (սուքս) տարաբեւ էին շատ քիչ:
Մինչևեւ ուրիշ ընկերութեանց կառավարմանը
բացի այդ, որ երկու երեք օրով մնացել են ձա-
նապահներում, այժմ յայտնվում է, որ կարելի կայ
մինչև անգամ նրանց նորից և հիմնաւոր կերպով
կտրկատել: Առաջին տասը հատը որովհետեւ
յաջող ընդունվելու դրան, անկասկած միւս-
ները աւելի դեղեցիկ դուրս կը դան, որովհետեւ
նրանց գործող ձևերը աւելի ընտելացած են
այժմ: Սյօր նորից կը ձանադարհեն դէպի Բա-
թում դարձնալ տասը հատ: Տեղական ուսու թե-
թը «Կառնի» գովասանքով է վերաբերվում դե-
պի Դահգեդանեանի գործարանը: Այս նրա խօս-
քերը. «Օրերումս ձանապահներ են Բաթումից
Թիֆլիս, Դահգեդանեանի գործարանում «Կա-
պեան ընկերութեան» պատկերած 10 հատ կա-
ռավարմանը: Մինչ Թիֆլիս այդ կատարելը հա-
տան մշտողութեամբ, առանց իշխակալի տաքա-
նալու, որը ներկայացնում է նշանաւոր առաւե-
րութիւն: Ահապարակ նոր կառքերի իւրակալնե-
րը սատար տաքանում սա, որոնց մէջ
մար հարկաւորվում է երեւմն ամեն մի կայարա-
նում բացել նրանց, բայց այդ էլ պատահում
Դահգեդանեանի գործարանում չինված կառքերի
հետ ձգնալիս է, այդ կառքերը չեն փայլում
արտաքին դեղեցիկութեամբ, բայց ուրիշ կողմից
նրանք աւելի ամուր են, քան այն կառքերը, ո-
րոնք չինված են ուրիշ գործարաններում»:

Ամսիս 16-ին, այ. Բուրաղեանց եղբայր. դու-
րաւորում, մի կաթնալի ճաթիւնից առաջացաւ
հրդեհ, որ բաւական յիշատ տուեց: Բաղրաւորա-
պէս մարդկանց հետ դժբաղդութիւն չը պատա-
հեց, որ այդպիսի դէպքերում հաջողակութեան երե-
ւոյթ է կազմում:

մէջ դաստիարակչական հարկաւոր մտքեր տարա-
ծել: Իսկ ի՞նչ ուղում էր գրականութեան միջո-
ցով ցոյց տալ ձեռ գիտութեան նշանները, եթէ
վերացական-մասնագիտական դատողութեանց մէջ
դուք գտնում էք ձեռ մտաւոր բաւականութիւնը,
այն ժամանակ հաւատացած եղել, որ դուք գրում
է ձուռնում էք միայն ձեռ համար, իսկ հասարա-
կութիւնը ոչ կարող է, ոչ էլ ընդունալ է հա-
կանալ ձեռ վիճաբանութիւնը: Եթէ մեզանում
մանկավարժական ուղղութեամբ ամառները
մինչև հիմա այնքան աշտոյնութիւն չեն ունեցել
զրա գլխաւոր պատճառներից մէկն էլ նրանց
անմատչելի և ժողովրդի մեծամասնութեան հա-
մար անհասկանալի ուղղութիւնն էր: Նրանք չը
կարողացան ժողովրդականացնել, տարածել մեր
մէջ գիտութեան օրոնքները: Նրանք չը կարողա-
ցան այնպէս լինական և հատուտ կերպով պա-
տուասել մեր հասարակութեան մէջ դաստիա-
րակութեան պարտաւոր, որ նա շուտով սիւկա-
կանութիւն դառնար մեծամասնութեան համար:
Ով է մեզաւոր. ժողովուրդը չէր հասկանում նը-
րանց ատմանքը՝ և այդ պատճառով էլ չուղեց
նրանց պաշտպանել: Մեզանում, առհասարակ տ-
վութիւն է դառնել ամեն բանում ժողովրդին
որ նա սովոր է, չէ հասկանում շուտով ամեն
բան, ինչ որ շատ պարզ է ինտելլեկտուալ հա-
մար Բայց եթէ ժողովրդին կարելի է մեղադրել
նրա տգիտութեան համար, — առհասարակներին

Մանր գողութիւններին թիւ և հաշիւ չը կայ,
դեռ միայն յայտնի — աշխարայ գողութիւնների
թիւը օրական 4—5-ից անցնում է:

Բագուցի

ՆԱՄԱԿ ԹԵՂԱԿՈՒՑ

Գունիսի 15-ին

Ամառվայ սեզոնը սկսվեց և թէլաւի մեռած
կեանքի մէջ կենդանութեան նշաններ սկսեցին
երեւալ. ամեն տեղից, մասնաւոր թիֆլիսից,
չտապում են մեղ մօտ գալ կաղաւթեղու համար:
Այստեղի օդը առողջարար է, ջուրը համեղ,
և կենսական պիտոյքները էժան: Միայն, տնե-
րի դէն բարձրացաւ: Այստեղ են այժմ ուսու
դրամատիկական խումբի արտաւանդից վեց հո-
գի — երկու դերասանուհի և չորս դերասան: Կայ
և ակորդայնների մի խումբ: Թատրոնական ներ-
կայացումները տալիս են թէլաւի կլուբի զանիւ-
ճում, որտեղ կայ մի շարժական բեմ: Երեկ տա-
լիս էին վերջին հրաժարական ներկայացումը —
յօղուտ թէլաւի ուսու. Նուսէի օրիորդական
դպրոցից: Թատրոնը լի էր, իսկ ներկայացումը
խաղի տեսակէտից՝ լաւ չանցաւ: Եւ սա բազմի-
մաստ խօսք է: Ակորդայնների ներկայացումները
առհասարակ վատ և վնասակար սպաւորութիւն
թողեցին ժողովրդի վրա:

Անցեալ շաբաթ այստեղ եկած Թիֆլիսի նա-
հանգապետ Ջիւրիմանին տեղիս հասարակութիւ-
նը մի ձօն ճաշկերոյթ տուեց կլուբում, որտեղ
այ. նահանգապետը հանդիսականներից հանդանա-
կեց 250 ռ. յօղուտ ս. Նուսէի օր. դպրոցի իր
կողմից նուիրելով 50 ռուբլի:

Թէլաւի ուսուց հողեր, քաղաքային և օր. դըպ-
րոցները և հայոց դպրոցների քննութիւնները:
Ինչպէս խոսւ ենք մեր դպրոցների ամբողջ խում-
բը հրաժարական է տալիս: Ահապարակ այս
տարի հոգաբարձութեան և ուսուցչական խմբի
յարաբերութիւնները այնքան էլ լաւ չէին. նոյն
իսկ ուսուցիչները միմեանց հետ լարված էին:
Բացի սրանից, ինչպէս վկայում են այդ ուսու-
ցիչներից մի քանիսը, այս տարի շատ քիչ առա-
ջադիմութիւն են ցոյց տուել:

Թէլա այս տարի կախելի մի քանի գիւղեր կարկ-
տաւոր եղան, բայց դարձեալ սպաւորում է առատ
հունձ և յաջող այգեկութ: Հունձը սկսված է:

Ամսիս սկզբներում, խօղաչեն գիւղում, Ղոր-

էս աւելի կարելի է մեղադրել, որ նրանք չեն
կարողանում հասկանալ ժողովրդի իսկական պա-
հանջները: Երկրորդ մեղադրութիւնը աւելի արդա-
րացի է առաջինից:

II.

Մի ժողովրդի մոտուր և բարոյական առաջա-
դիմութիւնը չէ կատարվում լոկ դպրոցի մոլոցով.
դպրոցը այստեղ առաջադիմութեան գլխաւոր
ֆակտորներից մէկն է: Նա մի այնպիսի գոր-
ծարան է, որի մէջ պատրաստվում են մար-
դիկ իսկական դարգացում ընդունելու հա-
մար: Եւ իսկական դարգացումը ձեռք է բերվում
ոչ թէ դպրոցում, երեխայական հասակի մէջ,
այլ կեանքի չփոփոխմանը մէջ, աւելի մեծ
հասակում: Բերնի հասակաւորների բարոյական
առաջադիմութիւնը կախված է երկու գլխաւոր
պատճառներից. սկզբնական դաստիարակութիւ-
նից, որ ստացվում է ընտանիքի և դպրոցի մէջ
ու իսկական, ընդհանուր մարդկային դարգացու-
մից, որ ստացվում է հասարակութեան մէջ, կեանքի
երեւոյթները դիտելուց և ուսումնասիրելուց:
Որպէս զի աւելի մեծ հասակում մարդիկ կարո-
ղանաւ աշտոյնութեամբ շարունակել իրանց դար-
գացումը, նախ հարկաւոր է, որ նրանք փոքր
հասակից լաւ պատրաստված լինեն դրա համար,
ընտանիքի կամ դպրոցի միջոցով, և երկրորդ
հարկաւոր է, որ մեծ հասակում, կեանքի դանա-
կան իստակութեանց մէջ, նրանք ունենան մի
ընդհանուր առաջնորդ, մի այնպիսի բարոյական

(ԿԸ շաբաթնապարհ)

